

# ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄԱՅԱԿ

**Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել ՀՀ հիմնական տնտեսական ցուցանիշներում ընթացիկ տարվա առաջին եռամսյակում: Նկատվել է, արդյոք, տնտեսության վրա կորոնավիրուսի համավարակի ազդեցությունը: Ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկվել երկրորդ եռամսյակում սոցիալ-տնտեսական արդյունքների վրա համավարակի ազդեցության հնարավոր մեղմման համար: Այդ առումով ի՞նչ դեր ունեցան ՀՀ կառավարության ձեռնարկած միջոցառումները: Այս հարցերի շուրջ «ՀՀ»-ն զրուցել է տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Վարդանյանի հետ:**

**– Պարոն Վարդանյան, ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել ընթացիկ տարվա առաջին եռամսյակի հիմնական տնտեսական ցուցանիշներում: Նկատվել է, արդյոք, տնտեսության վրա կորոնավիրուսի համավարակի ազդեցությունը, արտակարգ դրություն սահմանելը:**

– Ըստ պաշտոնական վիճակագրության առաջին եռամսյակում արձանագրվել են ինչպես դրական, այնպես էլ բացասական միտումներ: Բացասական փոփոխությունների մի մասը պայմանավորված է արտաքին գործոններով, իսկ մյուսը՝ մարտից ՀՀ-ում գործունեության որոշ տեսակների դադարեցումով: Այսպես, տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 104 տոկոս (2019 թ. նույն ժամանակահատվածում՝ 106.5 տոկոս), արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 8.7 տոկոսով (2019 թ.՝ 106.5 տոկոս, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ), գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը՝ 4.5 տոկոսով (2019 թ.՝ 99.8 տոկոս, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ), շինարարության ծավալը՝ կազմել է 90.6 տոկոս (2019 թ.՝ 110.8 տոկոս, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ), առևտրի շրջանառությունը՝ 100.2 տոկոս (2019 թ.՝ 110.1 տոկոս, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ), ծառայությունների ծավալը (առանց առևտրի)՝ 105.7 տոկոս (2019 թ.՝ 117.3 տոկոս, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ), էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 114.8 տոկոս (2019 թ.՝ 86 տոկոս, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ), միջին մասնական անվանական աշխատավարձը՝ 109.2 տոկոս (2019 թ.՝ 104.3 տոկոս, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):

Մյուս երկրներում համավարակի դեմ պայքարի ձեռնարկված միջոցառումները որոշակի ներգործություն են ունեցել ՀՀ արտաքին տնտեսական գործունեության վրա: Առաջին եռամսյակում արտաքին առևտրաշրջանառությունը կազմել է 96 տոկոս (2019 թ.՝ 95 տոկոս, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ), այդ թվում՝ արտահանում՝ 100.2 տոկոս (2019 թ.՝ 91.4 տոկոս, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ), ներմուծում՝ 93.8 տոկոս (2019 թ.՝ 96.9 տոկոս, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):

ՀՀ պետական բյուջեի հիմնական ցուցանիշների մասով տեղի ունեցած փոփոխությունները մասամբ կարող են պայմանավորված լինել համավարակի ազդեցությամբ: Այսպես, օրինակ, թեպետ բյուջեի եկամուտները նախորդ նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 17.1 տոկոսով (այդ թվում հարկեր՝ 16.5 տոկոսով), այնուամենայնիվ, բացասական միտումներ են դրսևորվել ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի, շահութահարկի եւ եկամտային հարկի մասով, որոնք 2019 թ. համեմատ համապատասխանաբար կազմել են՝ 83.9 տոկոս, 78.8 տոկոս, 52.5 տոկոս եւ 86.4 տոկոս: Այս միտումներն էական բացասական ազդեցություն կունենան 2-րդ կիսամյակում պետական բյուջեի հարկային եկամուտների վրա:

Այսպիսով, առաջին եռամսյակում տնտեսության մեջ նկատված բացասական միտումներից են (2019 թ. նույն ժամանակահատվածի համեմատ) տնտեսական ակտիվության ցուցանիշի անկումը, շինարարության ծավալի անկումը, ինչպես նաև որոշ ոլորտներում աճի տեմպերի նվազումը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ մարտ ամսին հատկապես շինարարության դադարեցումը կասկածահարույց կարող է համարվել. բաց տարածքում վարակի տարածման հավանականությունը սովորաբար փոքր է:

Առաջին եռամսյակի դրական միտումներից են արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտների, միջին ասակարգ անվանական աշխատավարձի աճը, արտաքին առևտրաշրջանառության մակարդակի պահպանումը գրեթե նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մակարդակին և դրա կառուցվածքի բարելավումը. 2019 թ. արտաքին առևտրի հաշվեկշռի բացասական սպառն կազմել է 542.8 մլն դոլար, 2020 թ.՝ 475.3, այսինքն 12.5 տոկոսով բարելավվել է արտաքին



առևտրի հաշվեկշռը: Դրական միտումներ են նկատվել նաև այլ ոլորտներում:

Վիճակագրական տվյալները փաստում են, որ ՀՀ տնտեսության վրա համավարակի ազդեցությունն առաջին կիսամյակում ընդհանուր առմամբ նշանակալի չի եղել: Այդ ազդեցությունն ամբողջապես կորսել է լորվել արդեն երկրորդ եռամսյակում, ինչի մասին վկայում են ապրիլ ամսվա ցուցանիշները: Այսպես, ապրիլին տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 95.3 տոկոս, իսկ արտաքին առևտրաշրջանառության ծավալը՝ 2019 թ. հունվար-ապրիլի համեմատ, 2020 թ. նույն ժամանակահատվածում նվազել է 8.7 տոկոսով, այդ թվում՝ արտահանմանը՝ 4.8 տոկոսով, ներմուծմանը՝ 10.6 տոկոսով:

**– Ի՞նչ դեր ունեցան ՀՀ կառավարության ձեռնարկած միջոցառումները համավարակի առաջացրած սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների հաղթահարման համար:**

– Կառավարության գործադրած ջանքերից որոշների արդյունքները (ուսանողների կրթաթոշակների, կուուուուսվ լճարների եւ այլնի մասով) արդեն իսկ շոշափելի են շահառուների համար, իսկ տրնտեսության մասով դրանց արդյունավետությունը կարող է գնահատվել երկրորդ եռամսյակի արդյունքներն ամփոփելուց հետո: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում դրանք կարող են չապահովել սպասվելիք արդյունքներ, որովհետև մեր տնտեսությունը հիմնականում «դանդաղաշարժ» է, ոչ ինտելեկտուալ, հետևաբար, դաժգորեն չի կարող արձագանքել առաջնային գործառնությունների, համավարակով պայմանավորված, արմատական վերադասավորությունների գործընթացներին: Ընդ որում, այստեղ խոսքը վերաբերում է ոչ միայն տեխնոլոգիական համապատասխան լուծումներին, այլև մարքեթինգային և այլ բնույթի խնդիրներին, ինչի համար կապահանջվի բավական ժամանակ: Կանխատեսումներն այս պարագայում անտեղի են, իսկ տնտեսական կորուստները հնարավոր կլինի համեմատաբար բարձր ճշգրտությամբ հաշվարկել միայն պաշտոնական վիճակագրական տվյալների հրապարակումից հետո:

**– Ի՞նչ լրացուցիչ քայլեր պետք է ձեռնարկվել երկրորդ եռամսյակում սոցիալ-տնտեսական արդյունքների վրա համավարակի ազդեցության հնարավոր մեղմման համար:**

– Առաջին հերթին նպատակահարմար կարող է դիտարկվել բյուջետային ծախսերի մեծացումը, ինչը, բնականաբար, կհանգեցնի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին պարտքի ավելացմանը: Որպես ծախսերի մեծացման հնարավոր աղբյուր կարող է դիտարկվել նաև փողի էմիսիան որպես սահմանային մեծություն դիտարկելով միջազգային պահուստների փաստացի մեծությունը: ՀՀ կառավարությունն արդեն իսկ գործադրել է միջոցառումների մի շարք փաթեթներ, որոնցից են նաև նորարարական դրամաշնորհներ, որոնք ցանկալի կլինեն ավելի ընդլայնել: Բայց այստեղ մի խնդիր կա. այդ գործը չի կարելի թողնել առկա բիզնեսների նախաձեռնությանը, հարկ կլինի պետության ակտիվ միջամտությունը հեռանկարային ուղղությունների, բիզնեսի նոր մոդելների զարգացման առումով: Ընդ որում, առանց պետական –

## ՍՓՅՈՒՌԸ ԿՄՊԻ ՄԵՋ Է

ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնարարի գրասենյակն սկսել է «Միությունը կապի մեջ է» ծրագիրը, որի նպատակն է առցանց հանդիպումների միջոցով շարունակել համայնքային ծանոթությունները, խնդիրների վերահետման ու հասցեագրումը, համագործակցության խորացումը:

«Ուսանավորված աշխարհում տիրող իրավիճակով ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնարարի գրասենյակը զարգացնում է մի շարք գործառնություններ: Մակայն սփյուռքի հետ կապն ու համայնքների հետ աշխատանքը շարունակում են մնալ Գլխավոր հանձնարարի գրասենյակի օրակարգի առաջնահերթություններում: Այդ իսկ նպատակով գրասենյակը Ջարեհ Սինանյանի գլխավորությամբ մեկնարկել է «Միությունը կապի մեջ է» ծրագիրը՝ նպատակ ունենալով առցանց հանդիպումների միջոցով շարունակել համայնքային ծանոթությունները, խնդիրների վերահետման ու հասցեագրումը, համագործակցության խորացումը:

Առաջին առցանց հանդիպումն Բազանիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ էր: Տեսակապի մասնակցներին ողջունեց Գլխավոր հանձնարարի գրասենյակի Սինանյանը և նշեց, որ անկախ աշխարհում տիրող իրավիճակից՝ սփյուռքի հետ կապը լինելու է մշտական և զարգացող:

Այնուհետ իսպանահայ համայնքի անդամները ներկայացրին բնակության երկրում ազգությամբ հայերի իրավիճակը, առօրյան և խնդիրները: Հատկապես կարևորվեց այն հանգամանքը, որ վարակի դեմ պայքարում համայնքը միահամուռ աջակցում է տեղի իշխանություններին հանդես գալով մի շարք նախաձեռնություններով, պատրաստելով անվճար պաշտպանիչ դիմակներ, սնունդ տրամադրելով խոցելի խմբերին, կազմակերպելով բուժաշխատողների անվճար տեղափոխումը: Նշվեց, որ քաղաքում ազգության հայերի շրջանակներում կան վարակակիրներ, որոնք բուժման փուլում են: Այս պայմաններում տեղի մեկօրյա դպրոցը, շախմատի և նկարչական խմբակները շարունակում են ուսուցումը հեռավար եղանակով:

Համայնքային ներկայացուցիչները բարձրաձայնեցին մի շարք հարցեր, որոնք վերաբերում էին համայնքի թույլ համակարգվածությանը, ձուլման վտանգի կանխմանը, Հայաստանից համայնքներ դասագրքերի առաքման ուշացումներին, երկրադարացիությանը, զինվարություններին:

## ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

### ԳՈՎԵՆ ԱՍԾՈՒՆ ԱՄԵՆ ԼԵԳՈՆԵՐՈՎ

Օրինեն Տիրոջ անունը, որովհետև միայն նոր անունը բարձր է, նորափառը երկնքից է երկրից վեր է:

Մաղմ. 148.13



Խորին երախտագիտություն Աստուծան մեծ ուրախություն հայ քրիստոնյա եկեղեցիների համար: ԱԲԲ ՄԵՆ Երաժշտաերգախմբային բաժնի գործընկերների աջակցությամբ ՀՀ-ում արևելահայերենով լույս է տեսել տոսաներով նոր երգարան «Երգ վերածննդի»: Նրա մեջ ընդգրկվել են երեք երգարանից վերցված 200 հոգևոր երգ. «Երգ վերածննդի» հրատարակված 2002 թ., ուսերեն, գրպանի հոգևոր երգարանից հրատարակված 1926 թ. Կոստանտնուպոլսում, հայերեն (որի բառապաշարը տարբերվում է արևելահայերենից), սուրբ հիմների և Ավետարանի երգերի գրքից կազմված հովիվ Է. Էյմաճեանի կողմից և սպագրված հայերենով, անգլերենով և թուրքերենով:

«Երգ վերածննդի» երգարանի երգերի մեծ մասը թարգմանել է Արայր Վախյանը, 25 հոգևոր երգ Հակոբ Հակոբյանը, իսկ մի քանի հիմների թարգմանիչները մեզ անհայտ են:

Մեր եղբայրության երաժշտա-երգախմբային բաժնի պատասխանատու Վ. Օվչինիկովը, թարգմանիչ Ա. Վախյանի և խմբագիր Ա. Հովսեփյանի հետ այցելեցին Դոնի Նոր Լախիջևանի հայկական համայնք, որտեղ նրանց շատ սիրալիր ընդունեց համայնքի գործադիր տնօրեն Ս. Մալադյանը: Ի հիշատակ համայնքի գրադարանին նրանք նվիրեցին մի քանի «Երգ վերածննդի» հոգևոր երգարան:

Թող մեր Տեր Աստուծո Հիսուս Քրիստոսի անունը փնտրվի յուրաքանչյուր ազգում՝ Նրան փառաբանող մարդկանց կողմից:

**Գոհար ՄԱՐԿԱՐՅԱՆ**  
«Հայաստանի Հանրապետություն»  
օրաթերթ

**Օրսան ԲՈՒՇ**